



Բաժնեգիրն տարեկան. — Ֆրանսա և. Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արուսասիան 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 11

2. ՏՄՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1930

ՄԱՍՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿԶ

ԵՐԿԻՆՔԻ ԵՒ ԴՌՈՒՔԻ ՎՐԱՅՈՎ

(ՎԵՐ. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆ)

Երանելոյն Սատուի գրութիւնը, որ երեցաւ Բան. քերի Թիւ 6 առաջին էջին վրայ, նախաբանին մէջ կը ներկայացնէ երկինքը իբր տեղ՝ բայց յաւէտ «վիճակ մը», եւ դժոխքը բոլորովին իբր «վիճակ»։ Ու մանք զարմանք եւ ցաւ յայտնեցին ինծի ասոր համար, որ պատճառ եղաւ այս յօդուածին։

Աստուծոյ այս սուրբ մարդուն յօդուածը խիստ սրտուակամ է՝ երբ մէկը հասկնայ բոլոր ըսել ու զուածը անոր ամբողջութեանը մէջ։ Սատու, Աստուծոյ ներկայութեան մէջ յաւիշտակութեամբ, հաղորդակցութեան մէջ է Անոր հետ։ Այն երանելի վիճակն է որ ան կ'ուզէ նկարագրել, եւ կ'անձկայ որ ամէն հաւատացեալ գիտակցօրէն ապրի այս հոգեւորարար միջավայրին մէջ, ինչպէս ինք ապրեցաւ։ Հակադարձաբար ան կ'երեւակայէ դժոխաստիպ փորձառութիւնը այն մարդուն՝ որ հոս չունի զԱստուծո, եւ դատապարտուած է ապրի յաւիտեան առանց ուրիշ հաղորդակցութեան ունենալու Անոր հետ։

Առաջին փորձառութիւնը ան կը կոչէ «երկինք», եւ երկրորդը «դժոխք»։ Ու կը վկայէ թէ այս երկուքը հաս կը սկսին եւ կը շարունակին գերեզմանէն անդին յաւիտեան։

Այսքանը ընդունելի է, վասն զի Աստուծոյ խօսքին համեմատ է։ Բայց եթէ «երկինք» յաւէտ «վիճակ մըն է» տեղի մէջ, եւ «դժոխք» միայն «վիճակ», առարկելի է անոր որ իրաւ շիտակ սորված է Սուրբ Գիրքը աս նիւթերուն վրայով։

Թէեւ, ըստ Սուրբ Գրոց, երկինք եւ դժոխք «վիճակներ են», բայց առաւելապէս կ'ուսուցուի թէ անոնք զատ զատ ճշգրտ են։ Ճշմարտութիւնը բոլորովին շիտակ տուած ըլլալու համար, ըսելու ենք թէ Սուրբ Գիրքը «երկինք» եւ «դժոխք» ըսելով կ'ուզէ ակնարկել չէ թէ փրկեալին եւ կորուսեալին հոգեկան վիճակներուն որ իրենց Մէջ կը ԴՏՆՈՒՆ, այլ մանաւանդ անոնց ոչ-Ֆիզիքապէս մարմնական վիճակներուն (զի «հոգեւոր մարմինն ալ կայ», Ա. Կորնթ. ԺԵ. 44) որոնց Մէջ իրենք կը ԴՏՆՈՒՆ յետ մահուան։ Անանկ որ «երկինք եւ դժոխք երկու տարբեր վիճակներ են» ըսելով՝ թէ պէտ մեզի առարկելի չէ, բայց կատարեալ ճշմարտութիւնը չի ներկայացներ, վասն զի ասոնք իրարմէ անջատ ճշգրտ են։

Հանգուցեալ երանելին կ'ըսէ թէ «Աստուծոյ մեղքն ստեղծեց, ոչ ալ գէշ կամ չար տեղ մը»։ Ասոր առաջին մասը շիտակ է, սակայն վերջինը ճշմարտութեան համեմատ չէ, եւ ճշմարտութիւնը մեր Տէրջ խօսքն է, «Մէկդի գացէր ինծմէ անիծեալներ, յաւիտեանական կրակին մէջ՝ որ ՊԱՏՐԱՌ՝

ՏՈՒԱԾ Է Սատանայի եւ իր հրեշտակներուն: «Յաւիտե-
նական կրակը (...դժոխք) ... ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է», Աս-
տուած՝ պատրաստեց, ինչպէս փրկեալներուն տեղն
ալ: Գովմ. ԺԳ. 1.4:

Ուրեմն դժոխքի վրայով երկու բան որոշ է.— 1՝
Թէ Աստուած պատրաստած է «տեղ մը» —
դժոխքը, եւ 2, Թէ Անիկա դժոխքը պատրաստած է
«Սատանայի եւ իր հրեշտակներուն համար»: Եթէ
մարդիկ հոն կ'երթան, ասոր համար է որ Սատանայի
ձաւբաններուն կը հետեւին: «Աստուած սէր է», այո՛,
բայց երբ մարդիկ ապստամբ են, ո՛վ պիտի ըլլայ տի-
եզերքի մէջ գերիշխան— Աստուած, Թէ չար մարդիկ:
Երեւակայեցէք որ Աստուած տեղ մը չունի ուր բան-
տարկէ չարերը ' ' ':

«Մէկդի՛ ԳԱՅԷՔ»: Մեր Տէրոջ՝ երկու բառով այս
խօսքն անմիջապէս կը պահանջէ որ «դժոխք» տեղ
մը ըլլալու է: «Գացէք», — ո՛ր: Անշուշտ տեղ մը:
«Մէկդի», մէկ կ'ողմ: Բնագիրը մէկ բառով հրա-
մայական է— Բ ո Ր Է՛ Վ Է Ս Թ Ի Է . արմատէ մը որ կը
նշանակէ մէկ կ'ողմ երթալ, բաժնուել, տեղէ մը
ուրիշ տեղ: Տէր Գիտուս ըսաւ Հրէա-
ներուն, «Իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ»
Գովմ. Է. 34: Եւ առաքելութենէ «ցուգա ինկաւ իր տե-
ղը երթալու» Գործ. Ա. 25:

Սատու բնաշնչաւան մը չէ, որպէս են Շաբա-
թապահներ, ըրսլականներ, նորուխտականներ եւն.
Վասն զի կ'ըսէ, «երկինք եւ դժոխք ... մահուանէ
վերջ կը շարունակուին միւս աշխարհին մէջ:
Ան կը հաւատայ «յաւիտեական տանջանք»ի, որ
բուն դժոխքն է:

Միւս կողմէն, կ'ըսէ Թէ «երկինքը ամէն տեղ է»,
եւ «դժոխքը տեղ մը չէ»: Արդ, եթէ չարերը պիտի
տանջուին, առանց բնաշնչութեան, յաւիտեան, ուրեմն
ստիպեալ ենք հետեւցնել Թէ փրկեալներ եւ կորուս-
եալներ մէկտեղ պիտի բնակին, միայն Թէ «տարբեր
վիճակներով»: Դժուար է հաւատալ Թէ Սատու այսպէս
ընդունած եւ քարոզած ըլլայ: Հապա ինչո՞ւ այսպէս
արտայայտուած է հանգուցեալը դժոխքի վրայով:

Այսպէս մէջտեղ կը մնայ դժուարութիւնը, այ-
սինքն՝ սա հարցը Թէ քանի որ դժոխքը տեղ մը չէ, եւ
չարերը չեն բնաշնչուիր, ուրեմն ո՛ր պիտի ապրին
իրենց դժոխատիպ վիճակը: Եթէ մեղաւորին սիրտը,
որ իր դժոխքն է, իր ներսիդին է, հապա ինք ո՛ր է
հանդերձեալին մէջ:

Հաւանական մեկնութիւնը սա ըլլալ կը Թուի ին-
ծի, Թէ անիկա այնքան յափշտակուած է եղեր Աստու-
ծոյ ներկայութիւնով, եւ այնքան արեքսած՝ այս վի-
ճակի զմայլանքով, որ մոռցած է նկատել մերձապէս
կարեւոր ուրիշ վարդապետական հարցերու իմաստ-
ները, եւ անոնց գործնական խնդրանքները: Գուցէ
մինչ իսկ անգիտօրէն զանց ըրած է ուսանիլ զանոնք
Սուրբ Գիրքին մէջ: Աստուծոյ հաճելի ժողովուրդներ.

բուն մէջ միշտ գտնուած են ասանկներ: Այս վիճակը
տեսակ մը միսթիք միակողմանիութիւն է, որ Թէ-
պէտ ակնածանք, երկիւղածութիւն եւ հիացում՝ կ'ազ-
դէ մեր վրայ, անոնց հանդէպ որ այս կեանքը կ'ապ-
րին, բայց տակաւին Աստուծոյ խօսքին ողջմտութեան
հայեացքով, պակասաւոր եւ աններդաշնակ երեւոյթ-
ներ կը ցուցնեն իրենց վրայ: Մտքի վերացում մըն է
այս. յափշտակութիւն, զոր կ'ունենային մարգարէնե-
րն ու առաքեալները: Պօղոս կ'ըսէ, Թէ «երբ ... Տա-
ճարին մէջ աղօթք կ'ընէի, մտքի յափշտակութիւն մը
եկաւ վրաս, եւ քրիստոսը տեսայ», Գործ. ԻԲ. 17, 18:
Ան յափշտակուեցաւ մինչեւ երրորդ երկինքը, առանց
գիտնալու Թէ մարմինով էր կամ առանց մարմինի,
«եւ լսեց չպատմուելու խօսքեր, զորոնք մարդու ար-
ժան չէ խօսիլ: Բ. Կորնթ. ԺԲ. 1.4:

Անշուշտ գիտնալու ենք Թէ սրբազան Հեղինակնե-
րը հարկաւորապէս եւ բացառապէս պաշտպանուած
էին Սուրբ Հոգիով մտքի անհաւասարակշիռ վիճակ-
ներէ կամ միակողմանիութենէ (որոնց ենթակայ են
միսթիքները), Վասն զի մասնաւորապէս կան-
չուած՝ եւ եղականօրէն ներշնչուած էին Աստուծոյ
պատգամները բոլորովին անսխալ աւանդելու հա-
մար: Այս պատճառաւ ապահով առաջնորդներ են
մեզի: Բայց Սատու եւ նմաններ միշտ այսպէս չեն,
եւ կարելի է ասոնց հաւատքին եւ վարմունքին մէջ
տեսնել սխալներ: Այս տարբերութիւնը աղէկ միտք
առնենք:

Խորհրդաւոր (միսթիք) վիճակը, այս մտային
վերացումը, հոգեւոր եւ անշուշտփելի երեւոյթներու
հափանցողութիւնը բաղձալի եւ ցանկալի կը թուին
մեզ. բայց միշտ ապահով վիճակ մը չէ ամէն հաւա-
տացեալի համար: Վասն զի, ինչպէս վերն ըսի, կրնայ
զատոնք ընել մտաւոր տեսութեամբ միակողմանի, դա-
տողութեամբ անհաւասարակշիռ, հոգեւոր բաները
չորս կողմէն քննելու անատակ, Սուրբ Գիրքը բաւա-
կան չափով սերտելու անտրամադիր, իրենց սխալնե-
րը հասկնալու մէջ անզգաստ, եւ մինչիսկ զանոնք
ընդունելու անյօժար: Դոնէ դժոխքի վրայով գրած էն
կը հասկնանք որ մեր շատ սիրելի եղբայրը այս վը-
տանգէն ապահով մնացած չէ կերպով մը: Երես ա-
մէնս ալ (մանաւանդ անոնք որ սուր երեւակայող
միտք ունին եւ փափուկ զգացական սիրտ) ենթակայ
ենք այս վտանգներէն մէկուն կամ միւսին: Եթէ
«մարգարէներուն հոգիները մարգարէներուն հնազանդ-
են» Ա. Կորն. ԺԳ. 32, ուրեմն միսթիքաւանու-
թիւնը, ինքնիրեն աղէկ բան մը, կրնայ վտանգա-
ւոր ազդակ ըլլալ՝ ենթակաները միակողմանի, ծայ-
րայեղ եւ հակասական ընելու, եթէ չգիտնան կառա-
վարել իրենց հոգիները անոր մէջ: Շատ մը Պէնտէկոս-
տէականներ եւ զգացական հաւատացեալներ այս վը-
տանգին (իրաւցնէ չարիքին) մէջ են այսօր:

Կարծեմ Սատուի միսթիք ըլլալուն կարեւոր մէկ

պատճառ մըն ալ սա է որ ան գաւակ է խորհրդաւոր երկրին (Հնդկաստանի) որ հին մի սթիք կրօններու աշխարհն է, եւ ուր հեծանոսներ միշտ կրօնական արտակարգ զգացումներով թափանցուած մարդիկ են: Սատու ալ այսպէս էր: Եւ երբ «Աստուծոյ փրկաւորար շնորհքը յայտնուեցաւ» անոր, անիկա եղաւ բացառիկ քրիստոնեայ նկարագիր մը, մի սթիք մընաւ լու արամադրութիւններով եկէ ոչ՝ պիտի մնար, անշուշտ, նոյնպէս մի սթիք հեծանոս մը, ինչպէս էր Տէր Յիսուս քրիստոսի իրեն հանդիպելէն առաջ: Անոր միտքն ու սիրտը միշտ զբաղած էին, մանաւանդ անշոջափելի եւ զրուտ հոգեւոր երեւոյթներով, եւ այս պատճառաւ աւելի իրական եւ դրական թրւեցան անոր վիճակաւ երկինքն ու դժուրքը, քան տեղականը:

Ո՛րչափ կարօտ ենք վերին իմաստութեան, ամէնաւալ, որ երբ կը լսենք Աստուծոյ առաւելապէս օրինուած զաւակներուն խօսքերը, կամ կը կարդանք անոնց գիրքերը: Հկորսնցնենք մեր ակործակը Աստուծաշունչի խօսքերուն վրայ: Եւ ո՛րչափ կարօտ ենք հանապազօրէ շնորհքի, որ երբ կը զմայլինք Աստուծոյ սուրբերուն կենցաղավարութեան, մէկ վայրկեան իսկ մեր աչքերը չդարձնենք Անկէ «որ Աստուծոյ փառաց լոյսն է, եւ իր հուծեան բուն պատկերը», երբ. Ա. 3, Որու «պատկերին կերպարանակից ըլլալու» սահմանուած ենք առաջուրնէ: Անիկա այսպէս օրինէ ամէնս: Բէսէտինա, քալիթ:

ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՔՐԻՍՏՈՍՈՎ ՄԻՈՒԹԻԻՆԸ

Յովհ. ԺԴ գլխուն մէջ երկու նախադասութիւններ կան, որք շատոնց խօսած են սրտիս, եւ կ'երեւայ որ, Աստուծոյ առաջնորդութիւնն է որ այս առաւում միտին նկատողութեան առնենք զանոնք: Նոյն ինքն Տէր Յիսուսի խօսքերն են անոնք, որ սրբազան էջին վրայ ցցուն եւ ակնյայտի գիրք մը կը գրաւեն: Այս երկու խօսքերը հուծեամբ իրարու շատ կը նմանին, թէպէտեւ մին քիչ մը աւելի զօրուոր է: Առաջինը 21 համարին մէջ է. «Որպէս զի աշխարհ հաւատալ թէ Դու զրկեցիր զիս»: Միւսը 23 համարին մէջ է, «Ու աշխարհ գիտնալ թէ Դուն զրկեցիր զիս»: 2-րդումք որ ասոնք նոյն ինքն Տէրը խօսած խօսքերն են, Իր վսեմ քաջանայական աղօթքին մէջ խօսուած. այն սուրբ ու նուիրական աղօթքին մէջ զոր Հօրը մատուց խաչը ելլելէ առաջ: Հիմա քննենք այս խօսքերուն պարունակութիւնը. եւ կարծեմ պիտի զարմանանք, զոն տեսնելով աստուածային հեղինակաւոր եւ մասնաւոր փորձաբար մը, որուն միջոցաւ հակառակ պայքարներու, երկրի վրայ վկայութիւն մը պիտի ըլլայ, իբր համոզիչ փաստ մը, թէ Տէր Յիսուս ոչ միայն մարդ մը (Լոկ բարի մարդ մը) միայն ուսուցիչ կամ մարդարէ մըն էր, այլ Աստուծոյ զրկուածը, Հօրը զրկածը:

Բոլորս ալ գիտենք զայս, բայց արդեօք մեր սրտերուն վրայ դրօշմուած է այն: Աշխարհը կը հաւատայ թէ Նազովքեցի Յիսուսը (անունը որով ճանչցուած էր, եւ այսօր ալ կը

ճանչցուի աշխարհի մէջ) Հօրը զրկածն էր: Նաեւ Աստուծոյ ելաւ եկաւ իբր Պատգամաբեր մը. եկաւ փրկարար գործ մը կատարելու որուն խորհուրդն ու սքանչելիքը սորվելու կ'սկըսինք: Ան բոլորովին կատարեց, լրացուց Իր գործը եւ ետ Աստուծոյ գնաց. բայց աշխարհ չի հաւատար:

Վէյրութիւն. Ն. Կ. ի թարգմանութեան մէջ այս համարը շատ նշանակալից է: «Որպէս զի աշխարհի տիրող եւ մընայուն հաւատքը ըլլայ թէ Դուն զրկեցիր զիս»: Քննենք զայս: Ծանօթ ենք աշխարհի պայմաններուն եւ վիճակին: Յաւանքն ինչպէս, որքան ասոնք որ մենք այս պարագաներուն մէջ ենք, այն պղտիկ աշխարհը որուն մէջ գուն եւ ես կ'ապրինք, ընդհանրապէս անացեալ մասին մէկ օրինակն է. եւ որքան որ մեր գիտութիւնը շատնայ աշխարհի մասին, այնքան աւելի պիտի հասկնանք որ այս աշխարհի համար Քրիստոսի Հօրմէն զրկուած ըլլալը տիրող եւ մայուն ճշմարտութիւն մը չէ: Աշխարհ չի հաւատար ասոր: Եթէ մարդիկ ուզեն եւ հաճին հաւատք մը ընծայել այս խնդրոյն, կը տեսնենք որ շատ զանազան գաղափարներ երեւան կու գան Յիսուսի անձին վրայ: Այսօր մարդիկ Իր մարդ եւ ուսուցիչ ըլլալուն վերայօք շատ փաղաքշական բաներ կ'ըսեն. նոյն իսկ զԱյն մարդարէ կ'անուանեն. բայց Տէրը հարցուց Իր աշակերտներուն, «Դուք Ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Դիտենք Պետրոսին պատասխանը. «Դուն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին»: Տրուած պայմաններով այդ պիտի ըլլայ «աշխարհի տիրող եւ մայուն հաւատքը»: Բայց աշխարհ չի գիտեր, չի հաւատար: Այս ինծի համար շատ աստիքաւոր բան մըն է. չեմ գիտեր թէ ձեզի ինչպէս կը թուի սիրելիներ, բայց այս որքան Աստուծոյ առջեւ զղջամբ խոնարհեցնելու էր զմեզ, քանի որ Տէրը խօսածը չէ յայտնուած աշխարհի, բացի շատ փոքրիկ չափով մը:

Դարձեալ տեսնենք 20 եւ 23 համարները. «Բայց չէ թէ մինակ անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր Ինծի հաւատացողներուն համար ալ»: «Ես անոնց մէջ եւ Դուն Իմ մէջ, որ իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ, ու աշխարհ հաւատայ թէ Դուն զրկեցիր զիս ու սիրեցիր զանոնք, ինչպէս որ զիս սիրեցիր:

Եկեղեցիին յայտնուած տեսնելի միութիւնն է որ աշխարհը պիտի համարէ թէ Հայրը զրկեց Որդին, եւ թէ Որդին Հօրը հրամանովը եկաւ: Այսպէս կ'ըսէ Տէրը: Աշխարհի վրայ միայն ո՛րքան պղտիկ չափով մը եկեղեցիին իրական միութիւնը յայտնուած է: Եկեղեցին, Քրիստոսի միութիւնը, իր պատմութեան ընթացքին աստուածային միութենէ մը զատ ամէն բան եղած է: (Դիտելի է որ եկեղեցին կամ Քրիստոսի մարմինը փոխաբերաբար կը գործածուին եւ միեւնոյն բաները ըսել են: Երբ ըսենք Քրիստոսի մարմինը, ըսել կ'ուզենք Աստուծոյ եկեղեցին զոր Յիսուս Իր արիւնովը ստացաւ):

Այս աստուածային միութիւնը Լոկ պարմինին անգամոց միջեւ եղած միութիւնը չէ, այլ նաեւ անգամոց եւ գլուխին հետ եղած միութիւնը. միութիւն մը որ միայն Աստուածութեան միութեան մը խօսքերով կարելի է արտայայտել. «Ինչպէս Դուն, ով Հայր, Իմ մէջ, ու Ես քո մէջդ, որպէսզի անոնք ալ Մեր մէջ մէկ ըլլան. Մեր մէջ ըլլան. ոչ թէ մէկ ըլլան» որպէս զի աշխարհ հաւատայ թէ Դուն զրկեցիր զիս: Ուստի եկեղեցիին միութիւնը ոչ թէ արտաքին, կազմակերպուած ու կարգադրուած բան մըն է, այլ Հոգիին միութիւնն է, կեանքով միութիւն մ'է: Եկեղեցին մէկ է, զի մէկ կեանքն է մը ոգեւորուած է. նոյն Ինքն Քրիստոսի կեանքովը Հոգւոյն

Սրբոյ միջոցաւ: Եկեղեցիին էն ներքին սկզբունքը Հոգին է: Հիմայ խնդրել այս է որ այս հիմնական իրողութիւնը այնքան քիչ ճանչցուած եւ պարզուած է որ այսօր աշխարհի մահաւատութեան ողբերգութիւնը արտօնեալ է, եւ սիրելիք, մենք պատասխանատու ենք ասոր համար: Կը նախընտրեմ աշխատել ըսել, քան թէ ըսել որ «եկեղեցին» է պատասխանատուն, որովհետեւ մեզի շատ դիւրին է յանցանքը եկեղեցիին վրայ դնել: Սակայն կը հաւատամ թէ Տէրը կ'ուզէ որ այս խնդիրը տեղ ընէ մեր արտերուն մէջ որ չըլլայ թէ իբր եկեղեցիին դատարանները երեւինք, այլ իբր եկեղեցիին մարմինները տեսնենք թէ որտեղ ձախողած ենք եւ Աստուծոյ առջեւ մեծապէս խոնարհինք այդ ցաւալի խնդրոյն համար:

Թէ որ դուք եւ ես ինքզինքնուս բարձր հոգեւոր գիրք մը տանք եւ սկսինք ինքզինքնիս բարձրացնել, հոգեւոր անդամաւորութեամբ պիտի վերջանանք: Իսկ եթէ տեսնենք թէ եկեղեցին ո՛րք ձախողած է ու դէմ առ դէմ գտնուինք այս իրողութեանց եւ մեր ոչ մանկական պատասխանատուութեան, Աստուծոյ առջեւ փռչի վրայ պիտի խոնարհինք: Կրնանք հետեւիլ եկեղեցւոյ պատմութեան տեսնելու թէ դարերու ընթացքին ինչպէս ձախողեցաւ այս նկատմամբ: Հիմա դիտելի է Սատանային նշանակէտը:

Որքան որ եկեղեցին, Քրիստոսի մարմինը, Աստուծոյ նշանակուած միջոցն է, որով Քրիստոս կը յայտնուի, այնքան ալ բոլոր դարերու ընթացքին Սատանային ռազմագիտութեան նշանակէտը եղած է: Թշնամիին մեթոտները երկպառակ եւ տարօրինակորէն յաջողակ եղած են: Իր առաջին ջանքը զայն ապականել եղած է, եւ եկեղեցւոյ պատմութիւնը դիտարկելը գիտենք թէ այս տեսակէտէն ինչ սթանդէրի կերպով յաջողեցաւ. այնքան լաւ կերպով յաջողեցաւ որ իւրաքանչիւր Աստուծոյ հետ բախելու փափաքող անձ պարտ էր բաժնուիլ այն բանէն որուն վերածուած էր եկեղեցին. ուրիշ ճամբայ չկար: Ապա մինչ կը հետեւինք պատմութեան, յանկարծ կը տեսնենք որ այս բաժնուողները, որոնք վկայութիւնը ունէին իրենց կարգին՝ դարձան Սատանային նշանակէտները:

Եթէ նա չէր կրնար դարձեալ ապականութեան խմորը ներմուծել եւ այսպէս բոլոր եկեղեցիին կործանել, կը ջանար աշխարհային սկզբունքներ ներածել. բաժանումներ, կապած եւ թիւրիմացութիւններ կը ստեղծէր բաժնեւոր սրտերը, եւ վերջապէս պիտի ընէր ամէն ինչ, ինչ որ կրնար, քան թէ թողուլ որ աշխարհի մէջ եկեղեցւոյ էական միութեան վկայութիւնն ու արտայայտութիւնը երեւնար: Ինչո՞ւ: Ահա բացատրութիւնը: Սատանան Տէր Յիսուս Քրիստոսի հանդիպեցաւ Դոգմաթայի վրայ. գիտէր թէ Նազարեցի Յիսուսը ո՛վ էր եւ կատարելապէս գիտէր թէ Հայրը Իր Որդին զրկած էր յաղթական Փրկիչը ըլլալու. ապա գիտէր որ եթէ երկրի վրայ Քրիստոսի իրական յայտնութիւնը կարելի ըլլար եկեղեցիին միութեանովը, իրական մերձեցումովն ու յայտնութեանովը, աշխարհ այն չափով պիտի հաւատար թէ Յիսուսը Հորմէն լրկուածն էր: Այս պիտի նշանակէր թէ Սատանան կորսնցուցած էր իր թագաւորութիւնը, իսկ ան՝ ամէն գնով պիտի ջանալէր ամէն ինչ որ իր թագաւորութեանը կը սպառնար: Առանց պատմութեան համար աշակերտ մ'ըլլալու, ուր որ ալ նայինք, կը տեսնենք որ այս է ճշմարտութիւնը: Թշնամիին ամէն տեսն այս միութեան հաղաւթական է ամէն ինչ ընելով՝ արգիւեւել համար որ երկրի վրայ եկեղեցւոյն ճշմարիտ միութիւնը արտայայտուի:

Իրողութիւնը եւ վկայութիւնը: Պէտք է լաւ հասկնանք

զայս: Եկեղեցւոյն միութիւնը ոչ թէ արտաքին, այլ ներքին բան մըն է: Աշխարհ չի կրնար տեսնել կեդրոնացած ճշմարտութիւնը, այլ միայն անոր արտայայտումը: Աշխարհ չի տեսնել թէ դու եւ եղբայրդ մէկ էք Քրիստոսով. աշխարհ կը տեսնէ ինչ որ կ'երեւի: Իրաւ է որ աշխարհի տեսածը չ'աղբեր եկեղեցիին կեանքով մէկ ըլլալու կեդրոնական իրողութեան, բայց վկայութիւնը կը տկարանայ: Վկայութիւնը կ'աչնչանայ. ուր որ բաժանում կայ, աշխարհ չի հաւատար. զի Քս. այս միութեամբ չէ ներկայացուած աշխարհի: Այն օրէն ի վեր որ օրհնեալ Փրկիչը կախուեցաւ Դոգմաթայի խաչին վրայ, աշխարհ չէ տեսած զԱյն՝ բացի եկեղեցւոյն անդամներուն մէջ: Խնդրեմ, յիշենք որ Քրիստոս աշխարհէ կը ճանչցուի այնպէս՝ ինչպէս որ կը տեսնուի եկեղեցւոյն եւ անոր անդամոց մէջ: Մենք պատասխանատու ենք ասոր: Այսպէսով Տէրը մեր վրայ խիստ ցաւալի եւ տառապեցնող բեռ մը կը դնէ. Ան կ'ուզէ որ էական օրհնեալ միութեան մը արտայայտութիւնը ըլլայ եւ այն չափով որ Սուրբ Հոգւոյն միջոցաւ այս մեր մէջ ի յայտ կու գայ, աշխարհի մէջ հզօր եւ աղբաւ վկայութիւն մը պիտի ըլլայ եւ այդ չափով է որ աշխարհը պիտի հաւատայ:

Թշնամին վարպետ ռազմագետ մըն է: Սկզբէն իսկ նա իր ուժերը այս ուղղութեամբ լարած է, եթէ չի կրնար ապականել, պիտի բաժնէ, եւ աշխարհի վրայ եկեղեցիին մէջ պիտի ներմուծէ այն բաժանումը զոր յարուց երկինքի մէջ հպարտութեան պատճառաւ: Երկինքի գեղեցիկ եւ դարմանալի կարգադրութիւնն իսկ բաժանումով տարուեցաւ: Այդ է որ վարը երկրի եւ եկեղեցիին մէջ բերուած է միեւնոյն տարբերուն միջոցաւ, հպարտութիւն, ինքնակամութիւն, որք երկինքի մէջ պատերազմի պատճառներն էին:

Սատանան շատ աշխատեցաւ եւ յայտնի է թէ ինչ յաջողութեամբ: Նախնական եկեղեցիին մէջ աշխատեցաւ զայն բռնել: Նայն իսկ ապականութեան պղծութեան ներս սարդելէն առաջ բաժանման սկզբնաւորութիւն մը կար: Հետեւաբար Կորնթոսի մէջ այդ հպարտ հոգին էր, «Եւ Պողոսեան եմ», «Եւ Ապղոստեան», այն՝ նաեւ «Եւ Քրիստոսեան», որք կը դանդաւանուէին միմեկին: Հաւանաբար Քրիստոսեանները աւելի հերձուածողական հոգի կը ցուցնէին, քանի որ իրենք ալ միևնուերուն պէս սխալ էին:

Արդ, այս պարագային ի՞նչ ըլլալու է մեր ընթացքը: Ի՞նչ է մեր պատասխանատուութիւնը: Ի՞նչ ընելու ենք եւ ի՞նչպէս նկատելու ենք այս խնդիրը: Այս կամ այն կողմ թափառելու ենք աշխատելով եկեղեցական միութիւնը կազմակերպելու: Ո՛չ: Այն բոլոր ջանքերը որք այսօր կ'ըլլան եկեղեցիները միացնելու, յաջողին կամ ոչ, որքան որ խնդիրը արտաքին միացման վրայ է, բոլորովին պիտի ձախողին Տէր Յիսուսի նախապէս իրադարձելու, զի ձեւակերպութեանց վրայ հիմնուած միացում մը չէ պահանջուածը, այլ Սուրբ Հոգւոյն պարտութեամբը եկեղեցւոյ հոգեւոր միութեան արտայայտութիւնն է որ աշխարհը պիտի համոզէ թէ «Հայրը զրկեց Որդին»: Պարտինք աղօթել որ եկեղեցւոյ էական ու հոգեւոր միութիւնը յայտնուի, իբր կենդանի արտայայտութիւն մը Անոր որ ճշմարտութիւն է: Տէրջը աղօթքը պատասխանուած է այս նկատմամբ եւ թէ եկեղեցին մէկ է: Ինչ որ այս խնդրոյն կը պատկանի, Սուրբ Հոգւոյն զօրութեամբն է միայն:

Ո՛չ լաւ հասկնանք զայս: Այս է հիմնական գեաինը ուր Սուրբ Հոգին կրնայ գործել: Յիշենք որ այսօր այս է թշնամիին եկեղեցւոյ դէմ մղած պայքարին ռազմական կեդրոնը:

կարելի է կրնաս խօսիլ Գողգոթայի յաղթանակին վրայ եւ տակաւին պառակտող մը կրնաս մնալ: Ո՛չ, Սուրբ Հոգիով խաչին ներգործութիւնն է որ եկեղեցւոյ իրական միութեան արտայայտման հիմ մը կրնայ տալ: Եթէ խաչը յաղթանակ մ'է, հոս ալ յաղթանակ մը ըլլալու է: Եթէ Բրիտանոսի յաղթանակը խաւարի իշխանութեանց ու չար իշխանապետութեանց դէմ ոեւէ տեղէ մը յայտ դալու է, հոս թշնամւոյն գլխաւոր ռազմադաշտին վրայ է որ պէտք է յայտնուի. եւ այս է որ ձեռք պիտի բերէ եկեղեցիին իրական հոգեւոր միութեան արտայայտումը:

Դիտէ՛ք սիրելիք որ եթէ մէկ ենք Տէրոջը հետ, մէկ ենք ամէն սուրբի հետ որ Բրիտանիոյ կը սիրէ: Այս շատ կերպերով կ'երեւի: Եղբոր մը կը հանդիպիս որ թերեւս երբեք չէիր տեսած. երբ սկսիք խօսիլ ձեր մէջ եղած գաղափարի զանազանութեանց վրայ, կը տեսնէք որ եղբակցութեան մը պիտի չյանգիք, ուստի կ'ըսէք, «Լուս, միասին աղօթենք»:

Եթէ դուք Բրիտանոսով մէկ էք հակառակ եղած տարբերութեանց: Միեւնոյն կեանքը ունիք, եւ այդ մէկ կեանքին ունէ արտայայտումը միութեան արտայայտում մըն է: Փորձառութեամբ այսպէս կը գտնենք, բայց կը կարծենք ճանչնալու նաեւ կեդրոնական միութեան իրական բնոյթը: Ո՛հ, փարիսէ մեր օրհնեալ Տէրոջը խօսքերուն, «Եւ այն փառքը որ Դուն ինծի տուիր, Եւ անոնց տուի, որ մէկ ըլլան ինչպէս որ Մենք մէկ ենք: Եւ անոնց մէջ եւ Դուն իմ մէջս, որ իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ»: Այդ «կատարեալ» բառը լրացած կը նշանակէ, կը նշանակէ թէ խղիւղը վերջացած է. թէ անոնք կրնան միութեան մէջ կատարեալ ըլլալ: Միեւնոյն բանը ունինք Եբր. Ժ. 4 ի մէջ. «Վասն զի մէկ պատարագով մշտնջենապէս կատարեց օրբուածները»: Ասիկա հաւատացեալին օրբութեան կախում ունեցող բան մը չէ, այլ բան մը որմէ կախում ունի հաւատացեալին օրբութիւնը: Ուստի եկեղեցւոյ միութիւնը, որ գոյութիւն ունի Բրիտանոսի մարմինին անդամներուն միջեւ, միութիւն մըն է որուն համար նոյն Ինքն Բրիտանոս պատասխանատու է եւ որ հիմնուած է Գողգոթայի իրողութեան վրայ: Բան մը չէ զոր մենք շինելու ենք, այլ խղիւղ մըն է զոր ընդունելու, ճանչնալու եւ անոր համաձայն գործելու ենք: Մենք յաճախ աշխատած ենք միութիւնը հաստատելու փոփոխական զայն ընդունելու:

Մենք մէկ մարդ ենք Բրիտանոս Յիսուսով: Ինքզինքդ կոչէ ինչ ու կ'ուզես, կամ բնաւ բան մը մի կոչուիր, բայց թէ որ իրապէս վերտօն ծնած Աստուծոյ մէկ զաւակն ես, իրապէս Բրիտանոսի մէջ ես. եկեղեցւոյն, Բրիտանոսի մարմին մէկ անդամը, եւ ապա դուն մտցուած ես այս կեդրոնական միութեան մէջ որ ուրիշ բան մը չէ այլ աստուածային միութիւն մը:

Այս բան մըն է որ միայն Հօրը եւ Որդւոյն միջեւ եղած միութեան բաւերովը կրնայ արտայայտուիլ: Ո՛հ, սիրելիք, այդ իրողութեան իւրաքանչիւր արտայայտում համարժէ է, եւ եթէ աշխարհ կարենար քիչ մը տեսնել զայն, Բրիտանոսը տեսած պիտի ըլլար: Այդ է որ կը համոզէ, ոչ թէ մեր խօսքերը, այլ ինչ որ ենք, մանաւանդ ինչ որ միասնաբար ենք. այն է որ կը փարի աշխարհի, որ նաեւ պիտի հաւատայ երբ Սուրբ Հոգւոյն ղորութեամբ եկեղեցւոյն իրական միութիւնը տեսնէ: Այլապէս այս ըսել է որ մենք պարտինք Հոգիով դէմ կենալ նսին եւ մերժենք որ եկեղեցւոյն մէջ պառակտում ըլլայ: Ստատանա ինչ որ ալ ընէ եւ ինչ պարագանք

ըռ մէջ ալ զմեզ բերելու ըլլայ, մենք պատասխանատու չըլլանք եւ չընդունինք բաժանումը իր օրեւէ ձեւին տակ: Տէրոջը եկեղեցիին մէջ պառակտումը Սուրբ Հոգիին դէմ մեղք մըն է, Գողգոթայի ուրաջումն է: Բաժանումը Գողգոթայի յաղթանակ մէկ ցուցադրութիւնը չէ երբեք, այլ թշնամիին երկինքի մէջ ըրածն է: Եթէ միայն կարենայինք այս կեանքի միութիւնը ձեռք բերել, այդ է էականը զոր պարտինք հասկնալ եւ ամուր բռնել:

Այս բեմը միութեան գետին մը չէ միայն, որովհետեւ կը համաձայնինք մասնաւոր վարդապետութեանց վրայ եւ կամ կը հաւատարմք հաւատքի զանազան վարդապետութեանց, ո՛չ, հաղար անգամ ոչ, այլ այս հ ա լ ա թ ո յ թ ը միութիւն մըն է, զի մենք Մէկ ենք ԲՐԻՏԱՆՈՍՈՎ:

Երբ Սուրբ Հոգին մեր փորձառութեան կիրարկէ այս ճշմարտութիւնը, միայն այն ատեն է որ կրնանք ի յոյս բերել այս միութիւնը: Երբ հոն հասնինք, մեր սրտերը պիտի կտրին տոսեւելով ասոր գործնական ուրաջումը. յայնժամ մենք պիտի կտրինք եւ գետնամուտ պիտի խոնարհենք Աստուծոյ առջեւ խոտովանելով եկեղեցիին եւ մեր անձնական մեղքը:

Տեսնենք Եփես. Դ. 1-4: «Ուստի կ'աղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար կապուած եմ, որ դուք այնպէս քալէք, ինչպէս կը վայել այն կոչմանը որով կանչուեցաք. բոլոր խոնարհութիւնով ու հեղուցիւնով, երկայնամտեամբ, սիրով իրարու ներդաժիւս ըլլալով: Ձանալով Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել. մէկ մարմին ու մէկ հոգի ինչպէս որ կանչուեցաք ձեր կոչմանը մէկ յոսովը»:

Սառնաման պատրաստ է խորտակելու ու կործանելու զայս. «խոնարհութիւնով ու հեղուցիւնով, երկայնամտեամբ», ասոր կը կարօտինք. պէտք պիտի ունենանք այդ արտաբանութեան վերջին մասնիկներուն իսկ: «Ձանալով Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել», եւ ապա Գաղատ. Թէ «Տէրը մէկ է», «մէկ մարմին», «մէկ հոգի ինչպէս կանչուեցաք ձեր կոչմանը մէկ յոսովը»: «Տէրը մէկ», «հաւատքը մէկ», «մկրտութիւնը մէկ», հոգիով միացած մէկ մարմին. «մէկզմէկ սիրով կրկնով»:

Հիմա մեղի եղած կոչը շատ սրտ է այս տեղ, եւ պէտք է թոյլ տանք որ Սուրբ Հոգին կիրարկէ զանոնք: Որքան որ իրականացնենք միութիւնը, այնքան աւելի նշաւակ պիտի դառնանք թշնամւոյն գործունէութեան ու պիտի ստիպուինք աւելի խոնարհելու Աստուծոյ առջեւ, որպէս զի Հոգւոյն մկրտմանութիւնը խաղաղութեան կապովը պահելու: Այս այնքան նեղութիւն եւ անձնադոհոյութեան հոգի կը պահանջէ, այնքան բացարձակ խոնարհութիւն Աստուծոյ առջեւ, այնքան անվերապահ ուրաջում մը բոլոր անձնական շահերու, որ միայն խաչը կրնայ մեր բովանդակ էութեան կեդրոնական մասերուն մէջ ներգործելով յառաջ բերել:

Ուր որ հոգեւոր կեանք եւ Սուրբ Հոգւոյն գործունէութիւնը կայ, թշնամին հոն է: Նա պիտի աշխատի ներմուծել բաժանումը, եւ որքան որ հոգեւոր կեանքը բարձր ըլլայ, այնքան աւելի թշնամւոյն ջանքերը անոր դէմ ուղղուած պիտի ըլլան. եւ մենք աւելի խոնարհութեամբ պարտինք քալել Աստուծոյ առջեւ: «Անոնք յաղթեցին անոր» ամէն տեղի մէջ եւ ի մտանաւորի այս պարտաւորութեամբ Գաղատ. Թէ արիւնով ու իրենց վկայութեան խօսքովը եւ իրենց կեանքը ջանքովը միմեկին մօտ: «Կատարեալ յանձնուած, անձնաւորութիւն, խաչին ներգործական փորձառութիւնը եւ եկեղեցւոյ ճշմարիտ միութեան մէկ արտայայտութիւնը. եւ աշխարհ պիտի հաւատայ

իր տեսած համեմատութեամբ, այդ համադրումը պիտի տպաւորուի եւ տատառածային հզօր շարժում մը պիտի ստեղծուի: Յայնմա՛հ հոգիները վերստին պիտի ծնին, յայնմամբ արթնութիւն մը պիտի տեսնենք, յայնմամբ նորէն պիտի լսենք մեղաւորաց կոչը, «ի՛նչ ընեմ որ փրկուիմ»: Այս կարեւոր պիտի ըլլայ Ս. Հոգւոյն կրակին եկեղեցին մաքրելովը, որպէս զի այն պաշտօնը որուն համար Հայրը Սուրբ Հոգին տուաւ՝ իրականանայ:

Աստուած զմեզ իրական զօրութեան կեանքի եւ փորձառութեան առաջնորդէ:

Ազատ Թարգմ.

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲՐՈՖ. ՎԵ. ՊԵՏԷՔՍ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Ժ. ԴԼՈՒՆ

ՄԱՐԴՈՒՆ ՄԱՐԻՆԸ

«Աստուած ըսաւ, Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք, եւ ճովու ձուկերուն ու երկինքի ցռչուններուն եւ անասուններուն ու բոլոր երկրի ու երկրի վրայ սողացող բոլոր սարուններուն վրայ ցուր իշխէ: Եւ Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը, Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա, արու եւ իգ ստեղծեց զանոնք: Եւ Աստուած օրհնեց զանոնք, եւ Աստուած անոնց ըսաւ, Անցե՛ք ու շատցե՛ք ու երկիրը լեցուցե՛ք, եւ անոր տրեցե՛ք. ու ճովու ձուկերուն ու երկինքի ցռչուններուն եւ երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն իշխեցե՛ք: Եւ ըսաւ Աստուած, Ահա ձեզի տուի բոլոր երկրի վրայ եղած ամէն սերմ սերմ ունեցող խոտը, ու ամէն ծառ՝ որուն մէջ սերմ տուող ծառի պտուղ կայ, ձեզի կերակուր պիտի ըլլայ: Ու երկրի բոլոր գազաններուն ու երկինքի բոլոր ցռչուններուն եւ երկրի վրայ կենդանութեան շունչ ունեցող բոլոր սողուններուն՝ ամէն կանանչ խոտը կերակուրի համար տուի, եւ այնպէս եղաւ:»

(Մանդ. Ա. 26 - 30)

Երկրորդ պատրաստ էր եւ ամէն կողմ փառաւոր կ'անք մը գոյութիւն ունէր, բայց արարածները դեռ կը սպասէին տեսնելի իշխանին: Զայս ստեղծելու համար՝ Աստուած միայն արարչական խօսքին չի դիմեր, հապա Սուրբ Երրորդութիւնը նախ կը խորհրդակցի ինք իր մէջ եւ ապա մեծ ու յաւիտեական վճիռ մը կու տայ. Հայրը, Արդին եւ Սուրբ Հոգին կ'ըսեն, «Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք»: Ի՛նչ մեծ պատիւ. ըսել է մարդը Աստուծոյ փոխարքան ըլլալու էր երկրի վրայ: Աստուծոյ նմանութիւնը, Անոր պատկերը բոլոր արարածներուն վրայ բացարձակ միապետ մը եւ միջնորդ մը անոնց եւ Աստուծոյ միջեւ: Բայց աւա՛ղ, ի՛նչ բանի վերածեցին զայն Սատանան եւ մեղքը. այնպիսի մէկու մը որ գերին է իր կիրքերուն ու ցանկութիւններուն, որ հիւանդկաւ մարմնոյ մը մէջ կը հիւծի, որ քրոնաճոր ճակատը դէպի երկիր կը խոնարհեցնէ ու կու լայ եւ որ արարածներուն վրայ իշխելու տեղ՝ կ'ապրի մշտապէս սարսափով: Կը վախնայ արեւի ջերմութենէն օդի ցուրտ հոտանքէն, կը վախնայ կրակէն ու ջուրէն եւ դաշտի գազաններէն, կը վախնայ կեանքէն, ինչպէս նաեւ մահէն, եւ իր ամբողջ կարողութիւնն ու գիտութիւնը բան մը չեն կորնար ընել ընդդէմ որթահմանն եւ կամ քուրայի եւ ժանտախտի

անտեսանելի միջոցներուն, որոնք իրեն սարսափելի ցուեր եւ մահացու հիւանդութիւններ կը պատճառեն: Ի՛նչպէս ինկաւ երկրի Թագաւորը եւ ի՛նչպէս ոչնչացաւ անոր փառաւորութիւնը:

Այսու ամենաշին մարդուն մարմնոյն վրայ իսկ կրնանք գտնել հետքեր իր բարձրութեան եւ ազնուութեան: Ան կենդանիներուն նման երկրի վրայ չի քաշու՝ գետնահակ՝ դէմքով, հապա սիւլը կը շօշափէ միայն ոտքերովը, իսկ գլուխը դէպի վեր կը բարձրացնէ: Եւ ի՛նչպէս կը միացնէ իր մարմնոյն մէջ այլ ըսլան յատկութիւններ. մինչ կենդանիներէն մին նշանաւոր է միայն իր արագընթացութեամբը, ուրիշ մը իր ուժովը, երրորդ մը իր սուր լսողութեամբը կամ տեսողութեամբը, եւ մինչ անոնց. մէ եւ ոչ մին բոլորը կը միացնէ գեղեցիկ համադրութեամբ մը, ըս. զարգացում մարդկային մարմնին ունի այդ ամէն յատկանքները իրենց ընտիր կատարելագործութեամբ: Պատուութեան ընթացքին ապրած են այնպիսի ուժեղ մարդիկ, որոնց ուժը՝ համեմատելով իրենց մարմնոյն մեծութեան եւ ծանրութեան՝ կը գերազանցէ ձկուրը կամ նոյնիսկ առիւծին: Մարդը իր վազքովը գլխը անցեր է ամենէն արագավազ կենդանին իսկ: Սահարայի մարդու օդին մէջ անապատարնակ արարին աչքերը կրնան ուղարկել ձիէն զանազանի՝ 12-15 քիլոմէթր հեռաւ. այս ահա իսկ Սիւրբայնակ Թունկու ազնուրը պարզ աչքով, առանց հեռագրի սովորի, Լուսնագի չորս արբանակները կը տեսնեն: Անկէ զատ՝ մարդը ծածկուած չէ Թեփով, փետուրով կամ մազով, որոնք Թէեւ կենդանին ցուրտէն կը պաշտպանեն, բայց կը վնասեն շօշափման զգայութեան, հապա փափուկ մորթով որ շատ զգայուն է արտաքին աշխուժեանց համար: Եւ ո՛ր կենդանին կրնայ մարդու նման դիմանալ Թէ՛ Սիպերիոյ 40 աստիճան ցուրտին, եւ Թէ՛ Ափրիկէի 42 աստիճան տաքութեան, կրնայ մարդուն նման ընակիլ Թէ՛ մշտնջենական սառլին եւ Թիւնիս եւ Թէ՛ հրակէզ առաջին մէջ, Թէ՛ լեռներու քարձր գագաթներու վրայ եւ Թէ՛ գետնէն մօտաւորապէս հազար մ Թըխար տեղերու մէջ, ինչպէս կ'ընեն Ֆայումցի հանքագործները Շուէտի մէջ:

Եւ ի՛նչ մեծ հրաշք մըն է իր մարմնին: Իր աչքը, որ պարագային համաձայն կ'ընդարձակի կամ կը նեղուի եւ որ կրնայ ինքզինք յարմարցնել Թէ՛ հեռագրի սովորի եւ Թէ՛ խոշորացոյցի օրէնքներու, նայելով Թէ՛ դիտածը հեռակայ կամ մօտակայ առարկայ մըն է: Ահա այդ աչքը ինքնին հրաշալի աշխարհ մըն է նոր չիղերու եւ մկաններու, որոնք լոյսի միլիոնաւոր ճառագայթներ ու սրահներ կ'ընդունին եւ մտքին հաւատարմութեն կը պատմեն Թէ՛ ինչպէս է դուրսի աշխարհը: Նոյնպէս է նաեւ մարդկային սկանչը, որուն մէջի 4300 զարմանալիօրէն փափուկ գաւազանիկները՝ տալիս մը յարերուն նման՝ ամէն ձայնի եւ հնչիւնի կը Թրմուան եւ որոնց միջոցաւ միտքը եղաւ. նուկներ, մանաւանդ բառեր զանազանելու մեծ հրաշքին փորձառու կ'ըլլայ: Բայց այս առիւթը զգայարանները գործունեայ վիճակի մէջ պաշլելու համար ունինք մարտդական գործարանները ու բերանը. որկորը եւ ստամոքսը կ'ընդունին յարմար սր. նուսնը եւ զայն մի քանի ժամէն արիւնի կը վերածեն. հացը, որ դեռ քիչ մը առաջ քու սեղանիդ վրայ կը կենար իբր մեռեալ ինք, հիմա քու մարմնոյդ մէկ մասը կ'ըլլայ. քիչ ասորեցող արիւնի եւ քու խորհուրդներուդ իբր գործիքը ծառայող ուղղի կը փոխուի: Յետոյ արիւնը, այդ խորհրդաւոր հեղուկը, որուն նկատմամբ Սր. Գիրքը մեզի կ'ըսէ Թէ՛ կեանքը անոր մէջն է, կ'ընդունուի սրտէն: Եւ ի՛նչ հիմնալի գործիք մըն է կեանքի այս հրաշալի կեդրոնը. ան գիշեր ու ցօրեկ անդադար կը

ցայտեցնէ այս կենսաբաշխի հիւնք՝ ամենանորը երակներու միջոցաւ՝ ուղեղին ու ստամոքսին մէջ եւ մինչեւ ձեռքի ու ոտքի մատերուն ծայրը եւ անով կը մտնուի քու ամբողջ մարմինդ։ Եթէ այս քու սիրտդ պողպատեայ եւ աղամանդեայ մեքենայ մը եղած ըլլար՝ շատանց մաշած պիտի ըլլար եւ անգործածելի դարձած։ Քանզի ան մէկ վայրկեանի մէջ 70 անգամ կը բաբախէ։ Օրուան մէջ՝ 100800 անգամ եւ տարուան մէջ՝ 36,792,000 եթէ դուն 50 տարեկան եւ առողջ մարդ մըն ես, քու սիրտդ մինչեւ հիմայ արդէն 1,800,000,000 անգամ բաբախած է եւ առանց ընդմիջման։ Այսու ամենայնիւ ան դեռ ոեւէ յոգնութիւն չի զգար։ Նոյնպէս անդադար եւ անխնայօրէն կ'աշխատին թոքերը, հազարաւոր բջիջներու մէջ թարմ օդ կ'ընդունին ու արեան կը հաղորդեն, որպէս զի ան կենսունակ մնայ։ անկէ ետ կ'առնեն մարմնոյն մէջ գործածուելով ապականած օդը եւ դուրս կ'արտաշնչեն։ Այս ամէնը կը պատահին առանց քու գիտակցութեանդ։

Մարսողութեան, արեան շրջագալութեան եւ շնչառութեան գործարաններէն զատ՝ մարմնոյն մէջ տարածուած է ճոխ ցանց մը նոյրը, ճերմակ լարերու, որոնք բոլորն ալ իրարու կը միանան ողնաձուծին կամ ուղեղին մէջ։ Ասոնք ջիղերն են, հեռագրի կամ հեռաձայնի թելերը, որոնց միջոցաւ հոգիի զգայութեանը կը ընդհանրուին ամէն ինչ որ տեղի կ'ունենայ մարմնոյն մէջ։ Գլուխը, որ ամենաբարձր տարրն է, անոր ցանցը կը կապուի ամենաբարձր տարրին հետ։ Եւ այս բոլոր գործառնութիւնները կ'ընդհանրուին մէկ մէկու։ Ներդաշնակօրէն։ Մէկը չի կրնար իր գոյութիւնը պահել առանց միւսին։ ջիղերն եւ ուղեղը միշտ արիւն ընդունելու են։ Եթէ այս միայն կէս վայրկեան ջիւղի, կամ եթէ միայն մի քանի կամիլ երակներէն դուրս ուղեղին մէջ հոսի, մարդը կ'անաւատանք կ'ըլլայ եւ գետին կ'իջնայ։ Նմանապէս սիրտը իր կարգին՝ իր գործառնութեան համար պէտք ունի ջիղերուն եւ պէտք է մանր ստամոքսէն։ Այս բանը ճշմարիտ է նաեւ թոքերուն համար։ Եւ այս ամէնը տեղի կ'ունենան ոչ թէ ճախ ու վախով, աղմուկով ու ժխորով, - ինչպէս կը սրտառայի մեքենային գործած առնէր, - հապա աշխարհի մեղմ, դիւրին եւ հեշտ եղանակով որ մարդը բնաւ չի նշմարեր թէ ինչպէս Աստուծոյ շնորհ իր մէջ այս բոլոր սքանչելի ուժերը կը կառավարէ եւ միաժամանակ գործունէութեան կը մղէ եւ զկենսաբանական ընթացքը ի յայտ կը բերէ։ Հոս տեսնէ՛ք Գաւթի ճիշտ քաջագանգելու, զի գրիմանով քեզմէ ով Աստուծոյ, որ ամառն ու զարմանալի կերպով ստեղծուեցաւ։

Ուրիշ նկատումով մըն ալ մեր մարմինը հրաշալի բան մըն է։ Մենք վարժուած ենք զայն նկատել իբր բոլորովին հաստատուն եւ անփոփոխ ստացուածք մը։ Բայց կը սխալինք։ Մեր մարմինը ծայրայեղօրէն փոփոխական ու անկայուն է։ անդադար կը հալի՝ ամէն ակնթարթի մէջ դարձեալ վերակազմուելու համար։ Մենք արդէն գիտենք թէ անկա իր գոյութիւնը պահելու համար՝ միշտ մնունքի պէտք ունի։ Բայց մինչ մեր մարմնին ծանրութիւնը օրական առ առաւել միայն մի քանի կրամ կ'աւելնայ, անդին մեր առած մնունքին քանակը քանի մը քիլոյի կը հասնի։ Այս իրողութենէն կը հասկնանք թէ մեր մարմնոյն մէջ նիւթերու մեծ եւ մշտատեւ սպառում մը տեղի կ'ունենայ։ Ինչպէս ջուրը կը շոգիանայ եւ ինչպէս նոյնիսկ հաստատուն մետաղները դանդաղօրէն իրենց ծանրութիւնը կը կորսնցնեն մաս առ մաս, քանի որ փոքր մասնիկներ անդադար աւանդմէ կը բաժնուին ու կը ցրուին, նոյնպէս ալ մեր մարմինը մշտատեւ լուծման վիճակին մէջ է։ Մինչդիմս ուղիւսները ազատ չեն այս գործողութենէն, քանզի հաստատուած է թէ անոնք ալ

մարմնոյն մէջ միշտ մաս առ մաս կը քայքայուին, բայց մարմնոյն անդադարութիւնով դարձեալ կը վերանորոգուին։ Այո, նոյնիսկ հաստատուած է թէ մեր մարմինը եօթն տարուան ընթացքին իր ամբողջութեամբը այնքան կը փոխուի որ նախկինէն փոքր մասնիկ մ'իսկ իր մէջ չի մնար։ ամէն բան վերէն վար նոր կ'ըլլայ։ Ասոր համաձայն 42 տարեկան մարդ մը իր մարմինը արդէն վեց անգամ ամբողջովին փոխած է։ Սակայն ասոր հակառակ իր ձեռն ու կերպարանքը էականապէս նոյնը կը մնան։ փոփոխականութեան մէջ խորհրդաւոր միութիւն մը եւ անփոփոխականութիւն մը ի յայտ կը բերեն եւ միշտ ուշադրութիւնը կը հրաւիրեն աստուածային թագուն ուժին վրայ, որուն ազդեցութիւնով տեղի կ'ունենան այս ամէնը։ Մարդկային հոգին, քու հոգիդ Աստուծոյ կարողութիւն ստացած է՝ գիշեր ու ցօրեկ, քու արթուն կամ քնացած վիճակիդ մէջ շարունակ իրեն քաշելու։ Նիւթի անհամար մասնիկներ եւ անոնցմով մարմին մը կերտելու ու անուցանելու, որպէս զի ինքը անոր միջոցաւ միշտ շփման մէջ մնայ արտաքին աշխարհի հետ։ Ոչ միայն այնքան, քու հոգիդ կարողութիւն ունի նաեւ մինչեւ մասնաւոր աստիճան մը մարմնոյդ իր յատկանիշներուն համապատասխան պատկեր մը տալու։ Ուշադրութիւն ըրէ՛ք քու հին ծանօթներէդ միոյն, որուն դուն կը հանդիպիս երկար բաժանումէ մը յետոյ, եւ որ իր քաջակալութեան ընթացքին ինքզինքը ցանկութիւններու անմատուցութեամբ ըրած է, Աստուծոյ բաժնուած եւ ինքն իր մէջ պառակտուած է։ Ձեռք կրնար իր դիմագծին եւ ընդհանուր մարմնոյն վրայ նշմարել թէ ան ինչպէս, հոգեպէս քայքայուած մարդ մը դարձած է։ Դուն զայդ պիտի նշմարես, եթէ նոյնիսկ ան շատ գեղեցիկ ու մաքուր կերպով լուացուած, ամառուած եւ հագուած շքուած ըլլայ։ Ասոր հակառակն ալ ճշմարիտ է։ Մենք մարդու մը միայն դիմագծին նայելով, առանց անորմէ խօսք իսկ լսելու՝ կը գիտնանք թէ անոր սիրտը բարեացակամութեամբ եւ աստուածային խաղաղութեամբ լեցուած է։ Ըսել է ինչպէս Աստուծոյ մարդը իր պատկերին պէս ստեղծած է։ Նոյնպէս ալ մեր հոգին իր մարմինը կը ձեւակերպէ իր պատկերին պէս։ անմաս հոգին առելի կամ պակաս չափով միշտ կը արտացոլայ անցաւոր ու մահացու մարմնոյն մէջէն։ Այս հոգին Աստուծոյ առելի մեծ հրաշքն է քան թէ մարմինը։ Բայց հոգւոյն վրայով պիտի խօսինք յաջորդ անգամ։

(Շար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՅՐԱՆՍԱԶԱՆ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԵՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

«Բանբեր»ի նախորդ թիւին մէջ մեր ըրած խոստման համաձայն՝ կը փափաքինք այսօր մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ Ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու բարձրագոյն համագումարին նկատմամբ, որ տեղի ունեցաւ 8-12 Սեպտեմբեր 1930ին Մարսէլի մէջ։

Եկեղեցիներու ներկայացուցիչներն էին, Պատ. Զ. Պոտաքեան եւ Պրն. Զարչաճեան՝ Փարիզէն, Պատ. Պարուսեան եւ Պրն. Լ. Նիկողոսեան՝ Լիւնէն, Պատ. Վահան Սաֆակեան՝

Վարման, Պատ. Ա. Փափազեան եւ Պրն. Պողոս Յակոբեան՝
փոխ Թագապետ, եւ Վեր. Յ. Ղազարոսեան, Պրն. Կ. Պատաթեան,
Պրն. Յ. Աբրահամեան ու Գ. Գ. Խաչիկեան՝ Մարտչէն։

A. C. O. ի կողմէ ներկայ էին միախմբուածեան անօրէն
Dr. Berron, Գանձապահ Mr. Kulim եւ աւետարանչոյ՝ Mlle.
Wiedeman.

Ռարախալի էր որ մեր քով իբր հիւր ունէինք նաեւ Ս.
Գրական գլխորդի ուսանողներէն Օրբ. Հ. Յակոբեան ու Պրն.
Ն. Սալիպեան (Փարիզէն) եւ Պարոնաթ Ի. Աբրահամեան, Ն.
Խաչատուրեան, Սամուէլ Պազգալեան եւ Կալին Պարոտեան
Լօլանէն։

Համագումարը բացուեցաւ Երկուշաբթի Սեպտ. 8ին, կէ-
սօրէ ետքը ժամը 2ին աթոժածողովով, որմէ ետքը տեղի ու-
նեց աւ Թիւթեան երեք անդամներէ բաղկացեալ վարչութեան
կազմութիւնը. քննարկեցան Վեր. Ղազարոսեան, Պատ. Պար-
տաթեան եւ Գ. Գ. Խաչիկեան։ Վարչութեան անդամները մի-
եւնոյն տուն հայ ներկայացոյցիներն են Գրանդալայ Աւս-
եկեղեցիներու Խառն ժողովին (Exécutive Comitee) որուն մէջ
A. C. O. միախմբութիւնն ալ կը ներկայանայ Ն'անսպէս
երեք անդամներով, անօրէն Dr. Berron, գանձապահ Mr.
Kulim եւ pasteur Rohr (Valence)։ Խառն ժողովը կը վալէ մեր
միութեան թէ՛ նիւթական եւ թէ հագեւոր գործերը։

Ժողովները տեւեցին 5 օր, ունեցանք օրական երկու նիստ՝
ժամը 9.12, եւ 2.6։ Իւրաքանչիւր նիստի առաջին մէկուկէս ժամը
նուիրուած էր աղօթածողովի, որու կարեւոր մէկ մասին
նիւթերը առնուած էին Մատթ. ԻԳ. Գլուխէն։ Իւրաքանչիւր հո-
վիւններուն ու ամենաբարեպաշտ տարրին՝ փարիսեցիներուն՝
յանցանքները մեզի առիթ տուին խորհելու մեզի հաստաց-
եալներու սեփական մեղքերուն վրայ յանդիմանուելու եւ խո-
նարհելու։ Մանաւանդ վերջին աղօթածողովին միջոցաւ Տէրը
մեզի ցոյցոյց մեր տկարութիւնները եւ մեղք մեզ ալ աւելի
միանալու մէկ մէկու եւ կրկու մէկովէկ։

Մնացեալ ժամանակը յատկացուեցաւ բանախօսութիւննե-
րու, խորհրդակցութիւններու եւ եկեղեցիներու տեղեկագիր-
ները լսելու։

Ա. Բանախօսութիւն։ Տեղի ունեցան երկու բա-
նախօսութիւններ. 1, Վեր. Յ. Ղազարոսեան խօսեցաւ «Արթ-
նութեան Պէտքերն վրայով եւ շեշտեց թէ ներկայ ժամանա-
կին մէջ շատ անհրաժեշտ է արթնութիւնը, քանի որ եկեղե-
ցին շատ տկարացած է եւ չի կրնար անհատաւորութեան հոսան-
քին եւ աշխարհի փորձութեան դէմ դնել։ 2, Պատ. Պարտաթե-
ան բանախօսեց նիւթ ունենալով «Գործնական Քրիստոնէութե-
ան»։ Ան պարզեց թէ ինչպէս կրնայ հաւատացեալը քրիս-
տոնէական սկիզբներն ու առաքինութիւնները կիրարկել ըն-
տանեկան, ընկերական եւ ազգային շրջանակին մէջ։ Երկու
բանախօսութիւններն ալ շատ շահեկան էին եւ առիթ տուին
օգտակար խորհրդածութիւններու։ Պատրաստ էին նաեւ ուրիշ
երեք բանախօսութիւններ, որոնց ընթերցումը յետաձգուեցաւ՝
ժամանակի անձկութեան պատճառաւ։

Բ. Խորհրդածութիւն։ Խորհրդածութիւնն էր դարձան մի քանի
ներքին խնդիրներու շուրջ, որոնք 2, 3 տարիներէ ի վեր պատ-
ճառ կը հանդիսանան մեր եկեղեցիներու տկարութեան։ Հարկ
է անկեղծօրէն խոստովանիլ թէ դեռ չկրցինք այս մասին ան-
հրաժեշտ թուող կարգադրութիւններն ընել։ Ուստի մեր այս
վերջերը յանձնեցինք ամենակարող Թիշկին, եւ հակառակ բո-
լոր դժուարութիւններու ժողովէն բաժնուեցանք եղբայրական
սիրով։

Գ. Տեղեկագիրն էր։ Լսեցինք Փարիզի, Լիճնի՝
Վարմանի, Արտէշի եւ Մարտչի եկեղեցիներուն տեղեկագիր-
ները, որոնք կարգացուեցան ներկայացուցիչներու կողմէն։ Քա-
նի որ անոնց համառօտութիւնը պիտի հրատարակուի «Բան-
րէր» մէջ, հարկ չկայ հոս անոնց մասին ռեւէ բան գրել։
Հոս միայն ուրախութեամբ կը յիշենք թէ բոլոր եկեղեցիներն
ալ վերջին տարուան ընթացքին գտնէ փոքր յատաջդիմութիւն-
ներ ունեցած են։ Բայց կը զգանք թէ Տէրը զմեզ աւելի պիտի
օրհնէր եթէ մեր մէջ աւելի մեծ հնազանդութիւն գտած ըլ-
լար։

Համագումարին 5 օրերուն ալ իրիկունները յատկացուած
էին աւետարանչական ժողովներու։ Հակառակ աննպատ օ-
դին՝ այցելութիւնը լաւ էր։ Այս ժողովները աւելի օգտակար
պիտի ըլլային, եթէ կարենայինք իւրաքանչիւր աւետարանչու-
կանէ յետոյ երկրորդ ժողով մըն ալ ընել։ Բայց սակայն ինչ-
նէր ժամը 9, 30 ին ժողովատեղին պարպել։ Ասով անգամ մ'ալ
շեշտուեցաւ Մարտչի համայնքին սեփական շէնքի մը անհրա-
ժեշտութիւնը։ Այս պարագան ալ ընթերցողներու աղօթքին կը
յան նենք։ (Շար.)

ԲԱՆՔԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

ա) «Բանքերը կրկին ծաւալով հրատարակելու մեր եւ ընթերցողներու
փափաքը ստիպուած ենք այս տարի ալ պատճառաւ մը յետաձգել եւ նոյն
ձեւով ու ծաւալով շարունակել, ըսելով հիմնական փոփոխութիւն մը յա-
ռաջիկայ տարուան եղէ Տէրը կամ։

բ) Բաժնեկիները միշտ հիմա ուշացող ընթերցողներէ պիտի
խնդրէինք որ այս պատիւ պարտականութիւնը զանց չընեն, քանի որ
տարին լրանալու վրայ է։

գ) Առ ի դիւրութիւն Բանքերի ընտանիքին, բաժանորդագրուելը
նորոգելու համար նոր ծանուցագիր չպիտի դրկենք, հապա Բանքերը
պիտի շարունակենք յառաջիկայ տարին ալ կանոնաւորապէս. սա համո-
զումով թէ արդէն կը սիրուի այն, իսկ եղէ մէկը իր բաժանորդագրու-
թիւնը դադարեցնել կ'ուզէ, յող հասի մեզի տարին չլմնցած գրել,
որպէս զի յառաջիկայ տարուան համար դադարեցնենք «Բանքերը»։

ԿԱՐԵՒՈՐ ԶԵՆՈՒՑՈՒՄ

Երկու շաբաթէն մեր քով պատրաստ պիտի
ըլլան շատ գեղեցիկ, գեղարուեստական քարդեր,
Ծննդեան, Նոր տարուան եւ ուրիշ պարագանե-
րու առթիւ իբր նուէր տրուելու, կամ որպէս
բաց նամակ դրկելու։ Քարդերը քանի մը տեսակ-
ներ են. ոմանք առանց գրի եւ ուրիշներ պա-
րագաներու համաձայն Ս. Գրական համարով մը
զարդարուած։ Ապսպրանքներ հիմակուրնէ կ'ըն-
դունինք, եւ կ'ընանք զրկել ամէն տեղ։

Դիմել խմբագրութեանս։

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպար. «ԲԱՆՔԵՐ»-ի, 7, Բիւ Բաքեր